

*Արձանագրություն թիվ 6*

*ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,  
կայացած 2017թ դեկտեմբերի 25-ին*

**Օրակարգ**

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը մագիստրոսական ծրագրերի գիտական սեմինարների կազմակերպման մասին:
2. Հաղորդում բազային ֆինանսավորմամբ և դրամաշնորհային գիտական թեմաների մասին, հաշվետվությունների հաստատում:
3. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում:
4. Մանկավարժական և ուսումնասիրտադրական պրակտիկաների արդյունքների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ պրոֆեսոր Տ.Վ. Ղուչիկյանը ներկայացրեց հերթական գիտխորհրդի օրակարգը:

1. Պրոֆեսոր Տ.Վ. Ղուչիկյան

-Օրակարգի առաջին և երկրորդ հարցերը նախորդ թիվ 5 նիստում քննարկել ենք: Բազային ֆինանսավորմամբ և դրամաշնորհային գիտական թեմաների ղեկավարները ներկայացրել են ամփոփիչ և ընթացիկ հաշվետվությունները: Քիմիայի ֆակուլտետի գիտխորհուրդը տվել է իր եզրակացությունը: Մենք միանգամից կանցնենք օրակարգի երրորդ հարցին: Օրակարգի երրորդ հարցը վերաբերվում է ձմեռային քննաշրջանին: Բոլոր ամբիոններն են պատրաստ քննաշրջանին:

Ամբիոնի վարիչները ներկայացրեցին, որ իրենց ամբիոններում քննատոմսերը կազմված են նոր պայմաններին համապատասխան՝ ընթացիկ քննությունների ժամանակ հարցատոմսը կազմված է 5 հարցից յուրաքնչյուրը 1 միավոր առավելագույն արժեքով, իսկ եզրափակիչ գնահատման համար քննատոմսերը կազմված են 5 հարցից տոմսի առավելագույն միավորը 10 է: Հին քննատոմսերը չեն կիրառվում:

2.Նիստի նախագահ, պրոֆ. Տ.Վ.Ղռչիկյան – Կարևոր խնդիր է Մանկավարժական և ուսումնասիրտադրական պրակտիկայի հարցը: Մանկավարժական և արտադրական պրակտիկայի հարցը դրված է 2 ամբիոնների վրա: Արտադրական պրակտիկա անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնից ղեկավարել է դոցենտ Ռ.Պ.Մխիթարյանը, օրգանական քիմիայի ամբիոնից ասիստենտ Հ.Գ.Ալվանջյանը: Մանկավարժական պրակտիկան ղեկավարել են դոցենտ Լ.Ռ.Հարությունյանը և ասիստենտ Լ.Վ.Կարապետյանը: Լսենք անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Ս.Հարությունյանի հաշվետվությունը պրակտիկաների կատարողականի վերաբերյալ:

- Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Ս.Հարությունյան

Արտադրական պրակտիկան արդեն մի քանի տարի է իրականացնում ենք Արտաշատի “Արարատ” գրուպ ձեռնարկությունում: Ուսանողներին ԵՊՀ-ի կողմից տրամադրվել է տրանսպորտային միջոց: Պրակտիկայի ընթացքում ուսանողները ծանոթացել են CO<sub>2</sub>-ի արտադրության բաժնի հետ: Իրականացրել են զովացուցիչ ջրերի անալիզ:

Մանկավարժական պրակտիկան անցկացրել ենք “Շանթի” դպրոցում և “Քվանտ” վարժարանում: Եվ “Արարատ” գրուպի աշխատակիցները և դպրոցի, վարժարանի մասնագետները գոհ էին մեր ուսանողների պատրաստվածությունից:

-Նիստի նախագահ՝ Տ.Վ.Ղռչիկյան

Հաջորդ տարվանից արտադրական պրակտիկան դարձել է 6 շաբաթ, այսինքն 1,5 ամիս տևողությամբ: Եթե հիշում եք նման տևողությամբ պրակտիկան անցկացնում էին ամառային արձակուրդների ընթացքում Կիրովականի և Ալավերդու գործարաններում, որոնք աշխատում էին ամբողջ հզորությամբ: Այժմ այդպիսի արտադրություններ չկան, հետևաբար պետք է մի քանի գործարաններում իրականացնել արտադրական պրակտիկան: “Արարատ” գրուպի հետ պետք է պայմանագիր կնքել և անցկացնել պաշտոնական դաշտ: “Մննդի անվտանգություն” բաժնի բաժնի համար արդեն երկու հուլիսից ունենք, պատրաստվում ենք երրորդ հուլիսից կնքմանը: Մենք ամեն ինչ պետք է անենք մեր ուսանողների համար:

-Վարդանյան Շուշաննա ՈԻԳԽ- ՈԻԳ-ի շրջանակներում մենք հանդիպել ենք մի գանի գործարանների ղեկավարության հետ նախնական թույլտվություն ենք ստացել ուսանողների այցի համար հետևյալ գործարաններում Բյուրեղավանի ապակե տարրաների, Պեպսի և Կոկա-կոլայի գործարաններում:

Նախագահ՝ Տ.Վ.Ղուչիկյան- Շատ լավ է, որ այդքան ակտիվ եք: Դուք պետք է որպես միջոցառումներ ֆիքսեք և պարտադիր է այցի ժամանակ դասախոսի ներկայությունը:

Ընթացիկ հարցեր.

-Պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան

1. Այս տարվանից հանվել են պետական քննությունները բակալավրիատում: Ուսանողները երկրորդ կիսամյակում ազատ են և պետք է իրականացնեն լուրջ, ծավալուն գիտական աշխատանք: Պետք է լուրջ ուշադրություն դարձնել գրական ակնարկի վրա, պետք է օգտվել հնարավորինս թարմ գրականությունից: Նշեմ նաև որ ավարտական աշխատանքի կրեդիտն 17 է:

2. Գիտական խորհուրդ է դիմել անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Ս.Հարությունյանը: Ֆիզիկական քիմիայի ինստիտուտում գործող 017 մասնագիտական խորհրդի կողմից փոփոխության է ենթարկվել անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դոցենտ Լ.Ռ.Հարությունյանի դոկտորական ատենախոսության վերնագիրը: Մասնագիտական խորհուրդը “Մոլեկուլային փոխազդեցությունները մակերևութային ակտիվ նյութ-ամինաթթու /վիտամին-ջուր համակարգերում և դրանց դերը քիմիական ռեակցիաներում” վերնագիրը ավելի մասնավորեցրել է և առաջարկել է դոկտորական ատենախոսության համար հետևյալ վերնագիրը “Մոլեկուլային փոխազդեցությունները մակերևութային ակտիվ նյութ-ամինաթթու /վիտամին-ջուր համակարգերում և դրանց դերը օքսիդացման ու կոմպլեքսագոյացման ռեակցիաներում”:

Որոշեցին- Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց Լուսինե Ռոմիկի Հարությունյանի դոկտորական ատենախոսության վերնագիր հաստատել՝ 017 մասնագիտական խորհրդի կողմից առաջարկած “Մոլեկուլային փոխազդեցությունները մակերևութային

ակտիվ նյութ-ամինաթթու /վիտամին-ջուր համակարգերում և դրանց դերը  
օքսիդացման ու կոմպլեքսագոյացման ռեակցիաներում՝ վերնագիրը:

Ֆակուլտետի գիտական

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Գիտ.խորհրդի

քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան